ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » հուլիս 2026թ. No 4239 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ կետի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/3832-26 առ 20.07.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ՝

1.Ընդունել Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված 2 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ (նոր արտադրական շղթա) համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի հուլիսի «22 » - ի N 4239- Ա հրամանի

Գրանցման հավաստագրի վերաձևակերպում պահանջող Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված դեղերի հետգրանցումային փոփոխությունների (նոր արտադրական շղթա) ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

ՀՀ	Փոփոխության տեսակ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	IA	Յարինա	դրոսպիրենոն, էթինիլէստրադիոլ	դեղահատեր թաղանթապատ	3մգ+0,03մգ; (21/1x21/) բլիստերում	Բայեր ԱԳ, Մուլերշտրասե 178, 13353, Բեռլին- փաթեթավորող, բաց թողնման հսկող, Բայեր Վեյմար ԳմբՀ և Քո. ԿԳ, Դոբերեյներշտրասե 20, Վեյմար 99427, Գերմանիա- բալք արտադրող, որակի հսկող	Գերմանիա	Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե 1, 51373 Լևերկուզեն	Գերմանիա	Դ	ԼՊՊ-№004136-ՊՊ-ԱՄ 17.07.2026
2	IA	Յարինա	դրոսպիրենոն, էթինիլէստրադիոլ	դեղահատեր թաղանթապատ	3մգ+0,03մգ; (21/1x21/) բլիստերում	Բայեր Վեյմար ԳմբՀ և Քո. ԿԳ, Դոբերեյներշտրասե 20, Վեյմար 99427	Գերմանիա	Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե 1, 51373 Լևերկուզեն	Գերմանիա	Դ	ԼՊՊ-№004136-ՊՊ-ԱՄ 17.07.2026